ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Տաթևիկ Վասակի Հակոբյանի «Սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի արտացոլումը թուրքական պատմագրության մեջ (XX դ. II քառորդ – XXI դ. սկիզբ)» թեմայով՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Աբդուլ Համիդ II-ի հակասական կերպարն ինչպես ակադեմիական, այնպես էլ հասարակական-քաղաքական խոսույթում շրջանառվում է տարաբևեռ շեշտադրմամբ՝ Թուրքիայի Հանրապետության գոյության հարյուրամյակի տարբեր փուլերում հոլովվելով հաճախ իրարամերժ ընկալումներով: Նոր հազարամյակի ԹՀ քաղաքական իրողություններում «Կարմիր սուլթանի» վերաբերյալ հիշողությունն ստացել է ընդգծված քաղաքական երանգավորում՝ դառնալով Ռ.Թ. Էրդողանի՝ իբրև «կրոնանվեր և քինախնդիր» *(«dindar ve kindar»)* նոր սերնդի առաջնորդի նկարագրի ձևավորմանը միտված քարոզչական արշավի մի բաղադրատարր:

Ատենախոսը՝ Տաթևիկ Հակոբյանը պատմագրության, քաղաքագիտության և աղբյուրագիտության հատույթում մի նոր լույսի ներքո է ներկայացնել բազմաթիվ թուրք և օտարազգի, այդ թվում՝ հայ ուսումնասիրողների կողմից քննության առնված մարդու և գործչի կերպարը՝ այն դիտարկելով օբյեկտիվ պատմական իրողությունների և պատմական հիշողության ձևավորման վրա ազդող հասարական-քաղաքական գործընթացների համադրամիասնության համատեքստում: Ժամանակի հոլովույթում գաղափարական հոսքերի ազդեցությամբ հաճախ ճկվող պաշտոնական թուրքական պատմագրության շրջափուլերի բաղդատման միջոցով հեղինակին հաջողվել է ստանալ սուլթանի քաղաքական մի նոր դիմապատկեր, որն ամբողջովին տեղավորվում է աշխատանքի հիմքում դրված նպատակի և խնդիրների ծիրում:

Առանձնահատուկ հիշատակման են արժանի հետազոտության՝ հայկական թեմատիկային վերաբերվող հատվածներում հեղինակի դրսևորած գիտական սթափությունն ու նրա կողմից կիրառված ակադեմիական չեզոք բառապաշարը, որոնք վկայում են ատենախոսի՝ մասնագիտական հասունության մասին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, ինչպես նաև օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Ներածության մեջ ներկայացված են աշխատանքի նպատակը, խնդիրները, ժամանակագրական սահմանները, արդիականությունը և գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը և օգտագործված գրականության և աղբյուրների տեսությունը:

Ատենախոսության առաջին գլխում Աբդուլ Համիդ II-ի ժամանակակիցների հուշագրությունների համադրական վերլուծության ուշագրավ փորձը զուգահեռվում է 20-րդ դ. առաջին կեսի թուրքական պատմագրության կողմից ներկայացված սուլթանի

քաղաքական կերպարի հետ՝ վերհանելով ուշ օսմանյան - վաղ հանրապետական թուրքական հասարակության գաղափարական-քաղաքական մետամորֆոզների համատեքստում այդ կերպարի կրած փոփոխությունները:

Հետազոտության երկրորդ գլուխն ընդգրկում է «արյունոտ սուլթանի» քաղաքական կերպարի, նրա արտաքին և ներքին քաղաքականության նկատմամբ թուրքական վերանայողական (ռևիզիոնիստական) պատմագրության ընդհանուր գնահատականի քննությունը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի գլխի վերջին ենթագլուխը, որը ներկայացնում է հայերի նկատմամբ գործված ոճրագործությունների առնչությամբ թուրքական պատմական շրջանակների ժխտողականության ձևավորման համակարգային պատկերը:

Աշխատանքի երրորդ գլուխն ուշագրավ ջանք է՝ վերհանելու մերօրյա թուրքական հասարակական-քաղաքական ընկալումներում սուլթանի պատմական նկարագրի կերպափոխման պատճառներն ու խթանները: Հատուկ հետաքրքրություն են առաջացնում գլխում ներկայացված Էրդողան - Աբդուլ Համիդ II զուգահեռները, որոնք ԹՀ իշխող կուսակցության քարոզիչների կողմից օգտագործվում են այլընտրանքային՝ քեմալական ավանդական մոդելից տարբերվող առաջնորդի (քըսաքյուրեքյան ընկալմամբ՝ «*başyüce*») կերպար ստեղծելու համար:

Ուսումնասիրության վերջում ամփոփվում է աշխատանքը և բերվում են հիմնական եզրակացությունները:

Ներկայացվող ատենախոսության վերաբերյալ առկա են հետևյալ նկատառումներն ու առաջարկները.

- Մեր կարծիքով՝ ուսումնասիրությունը կշահեր, եթե Աբդուլ Համիդ II – Էրդողան զուգահեռների քննարկման համատեքստում առավել որոշակի անդրադարձ կատարվեր ԹՀ գործող նախագահի քաղաքական հայացքներում նոր օսմանականության/նեոօսմանիզմի դրսևորումներին: Այս տեսակետից օգտակար մեկնակետ կարող էր լինել թուրք հետազոտող Հաքան Յավուզի աշխատությունը, որում հեղինակն Էրդողանի՝ կանտ-հեգելյան իմաստով *նեոօսմանյան աշխարհընկալման (Weltanschauung)* արմատները տեսնում է իսլամի և օսմանյան պատմության վերարժևորման մեջ (ընդ որում՝ հենց Աբդուլ Համիդ II-ի՝ Ն.Ֆ. Քըսաքյուրեքի վերապատմման օրինակով)[1]:
- Թեև ամբողջ ատենախոսության և, մասնավորապես, երրորդ գլխի չորրորդ ենթագլխում կարմիր թելի նման անցնում է պատմության նկատմամբ թուրքական պաշտոնական և գիտական շրջանակների վերանայողական (ռևիզիոնիստական) վերաբերմունքի հիմնավոր թեզը, վերջինի բովանդակությունն ու «*modus operandi*»-ն ներկայացված են դիպվածաբար և ոչ համակարգված: Մեր կարծիքով՝ հետազոտողի կողմից անցյալի փառաբանմանն *(glorification of the past /geçmişin*

[1] Տե՛ս **Yavuz H.M.,** *"Erdoğan's Neo-Ottomanism"* in Nostalgia for the Empire: The Politics of Neo-Ottomanism, New York : Oxford University Press, 2020, pp. 144-178 (հատկապես՝ 147-155):

yüceltilmesi) իբրև քաղաքական գործիք պետք է տրվեր ավելի միանշանակ գնահատական[2]:

- Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում անդրադառնալով թուրքերի ազգային ինքնագիտակցության ձևավորման մեջ Աբդուլ Համիդ II-ի ունեցած դերակատարությանը՝ ատենախոսն արդարացիորեն քննության է առնում թուրք ուսումնասիրող Սելիմ Դերինգիլի՝ «օսմանցուց թուրքի անցման» հայեցակարգը: Մեր կարծիքով՝ սոցիալական ինժեներիայի քննարկվող դրսևորման նկարագրությունն առավել ամբողջական կլիներ տեքստում գործընթացի տեսական-քաղաքագիտական գնահատականի արձանագրմամբ: Առավել ևս, որ ինքը՝ Դերինգիլը, օգտագործելով է. Հոբսբաումի առաջարկած քաղաքագիտական գործիքակազմը, վերոհիշյալ անցումը բնութագրում է իբրև *նախաազգայնականություն (proto-nationalism)*[3]:
- Հեղինակն աշխատանքում նշում է (էջ 15), որ հետազոտության ընթացքում իրականացվել է թուրքական «Սաբահ», «Աքշամ», «Յենի Շաֆաք», «T24» թերթերի էլեկտրոնային կայքերի մշտադիտարկում: Հաշվի առնելով, որ խնդրո առարկա խոսույթն այս կամ այն լույսի ներքո արծարծվում է թուրքական մամուլի՝ քաղաքական ամենատարբեր կողմնորոշում և գաղափարական ուղղվածություն ունեցող պարբերականներում՝ կարծում ենք, որ վերոհիշյալ լրատվականների առանձնացումն ենթադրում էր լրացուցիչ մեկնաբանություն և/կամ հիմնավորում:

Վերոնշյալ նկատառումները, սակայն, ամենևին չեն ստվերում հետազոտության գիտական արժեքը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և ընդգրկում հետազոտության հիմնական արդյունքները: Ուսումնասիրության առանձին դրույթներն արտացոլված են հեղինակի տասը հոդվածներում:

Աշխատության աղբյուրագիտական հենքը բավականաչափ հարուստ է. հեղինակի կողմից օգտագործվել է թեմայի վերաբերյալ առկա տարալեզու աղբյուրների գերակշիռ մասը: Ատենախոսությանը բնորոշ է սահուն, կուռ և տրամաբանական շարադրանքը: Օգտագործված եզրութաբանական ապարատը լիովին համապատասխանում է գիտական չափանիշներին: Ատենախոսի կողմից առաջ քաշված խնդիրներն արդիական են և մեթոդաբանորեն հղկված:

---

[2] Հմմտ. **Uzer U.,** *Glorification of the Past as a Political Tool: Ottoman history in contemporary Turkish politics*, The Journal of the Middle East and Africa, 9(4), 2018, pp. 339-357.

[3] Տե՛ս **Deringil S.,** *"From Ottoman to Turk: Self-Image and Social Engineering in Turkey"* in D.C. Gladney, Making Majorities: Constituting the Nation in Japan, Korea, China, Malaysia, Fiji, Turkey, and the United States, Stanford: Stanford University Press, 1998, p. 217: Հմմտ նաև **Hobsbawm E.J.,** *"Popular proto-nationalism"* in Nations and Nationalism since 1780: Programme, Myth, Reality, Cambridge: Cambridge University Press, 2000, pp. 46-79:

Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտական նյութի հմուտ մշակմամբ, վերջնարդյունքում արված եզրահանգումներն ունեն գիտատեսական, որոշակիորեն նաև՝ քաղաքական անվիճելի նշանակություն: Այս տեսակետից պետք է առանձնացնել հատկապես ատենախոսության երրորդ գլխի չորրորդ ենթագլուխը:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է արձանագրել, որ Տաթևիկ Հակոբյանի «Սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի արտացոլումը թուրքական պատմագրության մեջ (XX դ. II քառորդ – XXI դ. սկիզբ)» աշխատանքը հաջողված գիտական ուսումնասիրություն է և բավարարում է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ՝ իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ ԱԳՆ եվրասիական տարածաշրջանի վարչության
երկկողմ հարաբերությունների բաժնի երրորդ քարտուղար,
պ.գ.թ. Ա.Ա. Գևորգյան
26.04.2024 թ.

Ա. Գևորգյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.
ՀՀ ԱԳՆ անձնակազմի կառավարման վարչության պետի պ/կ
Մ.Կ. Մարտիկյան